ՈՒՂԵՐՁ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ

Ես հավատում եմ Հարությանը

Երեց Լարի Ռ. Լորենս, Տարածքի Նախագահ

Մի քանի տարի առաջ մեր ընկերուհին մենակ էր, երբ երկու ոստիկան մոտեցան նրա տան դռանը: Նրանք եկել էին տեղեկացնելու, որ իր 18-ամյա որդին, արժանավոր մի երիտասարդ, որը պատրաստվում էր միսիայի գնալ, զոհվել էր ավտովթարից՝ տնից ընդամենը 3կմ հեռավորության վրա: Նա արցունքներով ընդունեց այդ լուրը, սակայն, երբ ոստիկանները հարցրեցին, թե արդյոք հոգեբանական օգնության կարիք ուներ, նա վստահեցրեց նրանց, որ ամեն-ինչ լավ կլինի իր հետ: Նա ասաց. «Ես հավատում եմ հարությանը»:

Մի գուցե առավել հուսադրող խոսքեր, որ երբևէ հնչել են, ասվել էին երկու հրեշտակների կողմից մոտ 2000 տարի առաջ. «Ի՞նչ էք կենդանին մեռելների մէջ որոնում: Այստեղ չէ, այլ յարութիւն առաւ»: Հիսուսը հարություն առած առաջին էակն էր, որ դարձրեց հարությունը իրական՝ ապրող բոլոր էակների համար: Պողոս Առաքյալը մեզ վստահեցրել է. «Ինչպէս Ադամով ամենը մեռնում են, այնպէս էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (Ա Կորնթացիս 15.22):

Ի՞նչ գիտենք մենք Հարության մասին:

Մենք գիտենք, որ մեր հարություն առած մարմինները կլինեն կատարյալ: Ինչպես սովորեցնում է Ամուղեկը Մորմոնի Գրքում, հոգին և մարմինը պետք է կրկին միավորվեն կատարյալ տեսքով: Սա նշանակում է առանց հիվանդության, ցավի կամ արատների:

Հարության ժամանակ մենք կունենանք մեր անձնական ինքնությունը: Մեր տաղանդները, արժանիքները, հմտություններն ու խելքը հարություն կառնեն մեզ հետ միասին: Մենք հարություն կառնենք այն տարիքում, որում կմահանանք: Մանուկները կլինեն մանուկներ, երեխաները՝ երեխաներ: Նրանք կմեծանան, դառնալով երիտասարդ չափահասներ Հազարամյակի ժամանակ: Մեծահասակ տղամարդիկ և կանայք հարություն կառնեն որպես մեծահասակ մարդիկ, սակայն նրանք արագ, գրեթե, ակնթարթորեն, ձեռք կբերեն իրենց հիմնական (լավագույն) տարիքը: Ի վերջո, յուրաքանչյուրը ձեռք կբերի հավերժական երիտասարդությամբ արտաքին:

Կենդանիները և բույսերը նույնպես կրկին կապրեն: Անգամ Երկիրը, ի վերջո, հարություն կառնի և կդառնա Սելեստիալ Արքայություն:

Հարության մեջ հերթականություն գոյություն ունի: Հիսուս Քրիստոսը առաջինն էր, ով հարություն առավ, իսկ Նզովքի Որդիները կլինեն «վերջինները»: Արդար հոգիները, ովքեր մահացել էին Քրիստոսից առաջ, հարություն են առել Նրա հետ Զատկի առավոտյան: Նրանք ստացել են փառավոր սելեստիալ մարմիններ: Այդ ժամանակից ի վեր միայն մի քանի

Երեց Լարի Ռ. Լորենս, Արևելյան Եվրոպայի Տարածքի Նախագահ

մարդիկ են հարություն առել: Նրանց մեջ են Պետրոսը, Հակոբոսը և Մորոնին, ում ֆիզիկական մարմին պահանջող հատուկ հանձնարարություններ են տրվել:

Երբ Փրկիչը փառքով վերադառնա Երկիր, բոլոր արդար հոգիները, որոնք մահացել են Երկրի վրա Հիսուսի ծնունդից հետո, հարություն կառնեն: Նրանց շարքում կլինեն բոլոր փոքր երեխաները, ովքեր մահացել են մինչև ութ տարեկան դառնալը, ինչպես նաև նրանք, ովքեր մկրտվել են և հավատարիմ են եղել իրենց ուխտերին: Այն հոգիները, որոնք հարություն կառնեն Երկրորդ Գալստի ժամանակ, կստանան սելեստիալ մարմիններ, պատրաստվելով ապրելու Սելեստիալ Արքայությունում:

Հազարամյակի սկզբում, քաջարիների հարությունից հետո, Երկրի տղամարդիկ և կանայք, ովքեր պատվելի, սակայն ոչ քաջարի են եղել իրենց վկայության մեջ, հարություն կառնեն: Նրանց կտրվեն թերեստրիալ մարմիններ,

որոնց շնորհիվ նրանք արժանի կլինեն բնակվելու թելեստիալ արքայությունում:

Վերջապես, Հազարամյակի վերջում, կսկսվի երկրորդ հարությունը: Նրանք, ովքեր ստացել էին թելեստիալ մարմիններ, ովքեր մահկանացու կյանքում չէին ապաշխարել, սակայն Սուրբ Հոգու հանդեպ երբեք մեղք չէին գործել, հարություն կառնեն: Հոգևոր Բանտում իրենց մեղքերի համար տառապելուց հետո, նրանք կստանան թելեստիալ փառք, ինչը նրանց հնարավորություն կտա ապրել թելեստիալ արքայությունում:

Բոլորից հետո, Նզովքի Որդիները հարություն կառնեն անմահ մարմիններով, որոնք փառք չեն ունենա: Նրանք կապրեն Սատանայի և նրա հրեշտակների հետ «Արտաքին Խավարում»:

Ո՞րն է վերջին դատաստանի նպատակը, եթե մեր հարություն առած մարմինը արդեն որոշում է մեր արքայությունը:

Վերջին դատաստանը հնարավորություն է տալիս Աստծո յուրաքանչյուր զավակի կանգնել Փրկչի առաջ և հաշվետվություն տալ իր մահկանացու կյանքի համար: Սա տեղի կունենա միայն Հազարամյակից հետո, երբ Երկրի վրա յուրաքանչյուր մարդ հարություն առնի: Ոմանք ուրախությամբ կսպասեն Տիրոջ հետ այդ հատուկ հարցազրույցին, մյուսները կսարսափեն դրանից: Ոչ ոք չի վիճարկի որոշումը: Յուրաքանչյուրը կընդունի, որ Աստծո դատը արդար է:

Հարությունը իրական է: Նրանք, ովքեր կորած էին մահվան մեջ, կրկին կապրեն: Այս մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երևան Շրջանի համաժողովը

Հասմիրա Մինասարյան, Երևան Ճյուղ

2012 թվականի նոյեմբերի 4-ին, կիրակի օրը, տեղի ունեցավ Երևան Շրջանի Համաժողովը Երևանում: Նախագահում էր Տարածաշրջանի Նախագահ Լորենսը: Համաժողովը սկսվեց ժամը 11-ին Մարիոտ հյուրանոցի դահլիճում: Դահլիճը, ինչպես միշտ, լեփ լեցուն էր անդամներով և հյուրերով: Տիրում էր ջերմ ընկերական մթնոլորտ: Սրբերը ողջագուրվում էին միմյանց հետ, հարցնում միմյանց որպիսությունը և ուրախ զբաղեցնում իրենց տեղերը: Համաժողովները հոգևոր հիանալի սնուցման իրադարձություններ են և մարդիկ միշտ նոր և խորիմաստ բաներ սովորելու մեծ ակնկալիքներով են մասնակցում այդ ժողովներին: Այդ համաժողովում հայտարարվեց Շրջանի նախագահությունում որոշ փոփոխությունների մասին: Շրջանի Նախագահ Վարուժան Պողոսյանը կանչվեց որպես Միսիայի Առաջին Խորհրդական, Սարգիս Այվազյանը կանչվեց որպես Միսիայի Ընտանեկան Պատմության խորհրդատու և վեբ կայքի համակարգող: Շրջանի նոր նախագահությունում Նախագահ կանչվեց Հովիկ Հովհաննիսյանը, Առաջին Խորհրդական կանչվեց Իգիթ Պողոսյանը, իսկ Երկրորդ Խորհրդական Արթուր Սարգսյանը: Բոլորը մեծ ջերմությամբ խոսեցին Վարուժան Պողոսյանի մասին, նրան որակելով որպես մարդասեր և լավ ղեկավար ու օրինակ: Նախագահ Քարտերը ոգեշնչեց Եկեղեցու անդամներին ունենալՍիոնը մեր սրտերում: Մենք չենք բարգավաճի մինչև չունենանք

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԵՎԱՆ ՄԻՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Շրջանի նոր նախագահության կազմը՝ Նախագահ Հովիկ Հովհաննիսյան, Առաջին Խորհրդական՝ Իգիթ Պողոսյան, Երկրորդ Խորհրդական՝ Արթուր Սարգսյան

Սիոնը՝ սրտի մաքրություն, մեր սրտերում: Մենք պետք է զերծ լինենք 3 բանից և ունենանք 3 բան, որպեսզի հաջողության հասնենք: Ինչպես սուրբ գրություններն են ուսուցանում Ալմա 5.28 29 և 3 Նեփի 11.29-ում Եկեղեցում չպետք է լինի նախանձ, հպարտություն և հակառակություն: Եկեք քննենք մեր սրտերը՝ մենք հակառակություն ենք բերում Եկեղեցի, թե՞ խաղաղություն: Նախագահ Քարտերը հիշեցրեց մեզ 3 բաների մասին, որոնք շատ կարևոր են մեզ համար՝ առաջինը, ինչպես Հովհ. ԺԳ.34 35 հատվածներում Հիսուսը պատվիրեց. «Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: Սորանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն էք, եթե իրար վերայ սէր ունենաք»: Երկրորդ, Մոսիա 2.17 հատվածում ասվում է, «որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք: Մենք պետք է այցելենք, զանգենք, ցույց տանք մեր սերը մարդկանց: Երբ ծառայում ենք, մենք սկսում ենք սիրել: Եվ երրորդ, Մորոնի 7.44-47 հատվածներում խոսվում է գթության

մասին, որ դուք. «անպայման պետք է ունենաք գթություն, քանզի եթե դուք չունենաք գթություն, դուք ոչինչ եք, ուստի դուք անպայման պետք է ունենաք գթություն: Եվ գթությունը երկայնամիտ է և բարի, չի նախանձում, փքված չէ, իրենը չի փնտրում, չի գրգռվում հեշտորեն, չարը չի մտածում և չի հրճվում անօրինությամբ, այլ հրճվում է ճշմարտությամբ, տանում է ամեն բան, հավատում է ամեն բանի, ամեն բանի հույս ունի, ամեն բանի համբերում է:… Ուստի հարեք գթությանը, քանզի գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ. Եվ ով, որ օժտված լինի դրանով վերջին օրը, նրա համար լավ կլինի»: Ուստի սրտի ողջ կորովով պիտի աղոթենք Հորը, որ գթություն ունենանք»: Հովիկ Հովհաննիսյանը նշեց, որ երկար տարիներ Նախագահ Պողոսյանը նրա համար լավ օրինակ է եղել և ընկեր: Նա հիշեց մի դեպք, թե ինչպես նա այցելել էր իր որդուն բանակում և ցույց տվել իր սերն ու հոգատարությունը նրա հանդեպ: Նախագահ Պողոսյանը այդ մասին ոչինչ չէր ասել իրեն և երբ, պատահաբար, նա իմացել էր և հարցրել այդ մասին, Վարուժանը պատասխանել էր, որ այդ շրջանով էր անցնում, մտածեց գնալ և տեսնել տղային: Նախագահ Պողոսյանի ամենաբնորոշ գծերից մեկը նրա համեստությունն է ու խոնարհությունը, եզրակացրեց Հովիկ Հովհաննիսյանը:

Մայքլ Մինասյանը խոսեց ծնողներին պատվելու մասին, նշելով, որ ծնողները միակ մարդիկ են, որոնք միայն բարին են կամենում իրենց երեխաներին, և եթե երեխաները չեն հարգում իրենց ծնողներին, դրանով նրանք վիրավորում են Աստծուն, որովհետև Նա էլ մեր բոլորիս ծնողն է և պատվիրել է մեզ, որ մենք հարգենք մեր ծնողներին, այլապես Աստծո արքայությունը չենք կարող մտնել:

Քույր Լորենսը խոսեց ներելու մասին: Նա օրինակ բերեց իր կյանքից, թե ինչպես նրանց հարևանը եկել էր իրենց տուն և քննադատել իր մորը, 5 տարեկան քրոջը, ընտանիքի բոլոր անդամներին: Նա սև հոգի էր զգացել նրա այցելությունից հետո: Վերջում, նրա մայրը շնորհակալություն էր հայտնել նրա առաջարկների համար, երբ նա խորհուրդ էր տվել, որ երեխաները չպետք է աշխատեին, այլ միան խաղային, և չպետք է խաղային հարևանի երեխաների հետ: Երբ նա գնաց, բոլորը լուռ էին: Մայրը գնաց և բերեց թուղթ և մատիտ և պատվիրեց, որ երեխաները գրեին տասը բաներ, որոնք նրանք հավանում էին այդ կնոջ մեջ: Հիսուսն ասել է, որ մենք սիրենք մեր թշնամիներին: Նրանք շատ երկար մտածեցին և նա հիշեց, որ այդ կնոջ եղբայրը լավ ձայն ուներ: Նա նաև նկատեց, որ երբ ինքը և մյուս երեխաները սկսեցին գրել, թե ինչ էին հավանում այդ կնոջ մեջ, սկսեցին զգալ Սուրբ Հոգին: Երբ նրանք լրացրեցին ցուցակը, նրա մայրը տարավ այն իրենց հարևանին: Նա անակընկալի եկավ, բայց վերջում շնորհակալություն հայտնեց: Հաջորդ օրը նրանք տորթ թխեցին և տարան նրան: Նրա մայրն իր օրինակով ցույց տվեց, թե ինչպես է պետք ներել: Ներումը երջանիկ ամուսնության գաղտնիքն է: Ավետարանը կատարյալ է, բայց մենք՝ ոչ: Բոլորս էլ ձգտում ենք կատարյալ լինել, բայց կատարում ենք սխալներ: Որպեսզի դառնանք լավ հետևորդներ, մենք պետք է ներենք միմյանց:

Նախագահ Լորենսը խոսեց պատվիրանների մասին, նշելով, որ դրանք տրվել են մեզ, որ մենք օրհնվենք:

Յուրաքանչյուր պատվիրանի կցված է օրհնություն: Նախագահ Հինքլին պատմել է մի վերադարձած երիտասարդ միսիոների մասին, որի անունը Հոսե էր, իսկ կնոջ անունը՝ Մարի: Նրանք ծանր վիճակի մեջ ընկան և նույնիսկ բավականաչափ ուտելիք չունեին: Հոսեն որոշեց տասանորդի փողից ուտելիք գնել, բայց նրա կինը թույլ չտվեց, ասելով, որ դա Աստծո փողն էր: Նրանք սոված քնեցին և առավոտյան սոված վեր կացան և գնացին կիրակնօրյա ժողովին: Նրանք տվեցին տասանորդի գումարը եպիսկոպոսին, բայց ամաչեցին ասել, որ սոված էին: Նրանք դուրս եկան և մի քիչ քայլելուց հետո ճանապարհին հանդիպեցին նոր մկրտված մի անդամի, որը նրանց 5 ձուկ տվեց, նրանք ուրախ-ուրախ շարունակեցին իրենց ճանապարհը և մեկ ուրիշ անդամ նրանց կանչեց տուն և լոբի տվեց, նրանք շարունակեցին իրենց ճանապարհը և մեկ ուրիշ անդամ էլ նրանց հաց տվեց, իսկ մեկ ուրիշը՝ բրինձ: Նրանք ունեցան երկու շաբաթվա ուտելիք: Եթե տասանորդ չենք վճարում, ասաց Նախագահ Լորենսը, մենք օրհնություններ չենք ստանում: Նա իր կյանքի փորձառությամբ կիսվեց ծոմի վերաբերյալ՝ պատմելով, թե ինչպես նրա որդին, որը 25 տարեկան էր և պետք է երեխա ունենար, բարդությունների առջև էր կանգնել և զանգահարել էր իրենց և խնդրել, որ ընտանիքը ծոմ պահեր իր կնոջ և երեխայի համար: Բժիշկները հույս չէին տալիս, որ երեխան կապրեր, որովհետև շնչառությունը

խանգարված էր, իսկ կինը կարող էր այլևս երեխա չունենալ: Նրանք 24 ժամ ծոմ պահեցին և հաջորդ օրը նրա որդին զանգահարեց և ասաց, որ երեխան ինքնուրույն շնչում էր և վիճակը կարգավորվում էր: Հաջորդ կիրակի նրանք նորից ծոմ պահեցին: Այժմ այդ երեխան 13 տարեկան առողջ գեղեցիկ աղջիկ է: Իսկ կինը անցյալ տարի ունեցավ 6-րդ երեխան: Մեր աղոթքները պատասխանվում են: Ծոմը հզոր հոգևոր ուժի, ֆիզիկական առողջության աղբյուր է, մենք ձեռք ենք բերում խոնարհություն, առողջություն: Ծոմը կարող է հարթել վեճերը, փրկել կյանքեր, տալ աշխատանք և ամրացնել վկայությունը: Մենք պետք է շնորհակալ լինենք պատասխանների համար և երախտագիտություն հայտնենք մեր Երկնային Հորը: Ծոմը հրաշքների աղբյուր է և մենք պետք է կիրառենք դա մեր կյանքում, և քաջալերենք, որ մեր եղբայրներն ու քույրերն էլ անեն նույնը: ■

Մաքուր ջուր Հայաստանի գյուղերին

Մարգարիտա Այվազյան, Երևան ճյուղ

Ջրով ապահովված լինելը մարդու կենսագործունեության համար առաջին անհրաժեշտության հարց է, այդ պատճառով Հայաստանի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից 1998-ին հաստատված Վերջին Օրերի Սրբերի Բարեգործություններ կազմակերպությունը (ՎՕՍԲ) հատուկ ծրագիր է իրականացնում, որի նպատակը Հայաստանի գյուղերը մաքուր ջրով ապահովելն է: Կազմակերպության նպատակն է՝ օգնություն հասցնել բոլոր նրանց, ովքեր կենսական կարիքի մեջ են, անկախ հավատքից, ազգից կամ ռասայից:

Վերջին վեց տարիների ընթացքում ՎՕՍԲ-ը մաքուր ջուր է հասցրել 158 գյուղերի: Իսկ 2012թ.՝ 34 գյուղեր նույնպես օգտվել են այս նախաձեռնությունից: Այս ծրագիրը իրականացվում է տեղային գյուղապետերի և մարզպետերի հետ:

Յուրաքանչյուր նախագիծ ունի իր առաջնակարգ մասնագետը, ով անհատապես պայքարում է մարդկանց շահերի լավագույն բավարարման համար և ավարտի է հասցնում տվյալ նախագիծը: Այսօր օգտագործվող ջրախողովակներն ավելի բարձրորակ և ավելի դիմացկուն են: Այժմ օգտագործվող բոլոր ջրախողովակները երկար շահագործման ժամկետ ունեն և սերտիֆիկացված են խմելու ջրի տեղակայման համար:

Մի գյուղում ջրագծեր փորող ամենատարեց մարդը չէր կարողանում հավատալ, որ իրենք վերջապես ջուր ունեն, և ասաց, որ դա վերջին յոթանասուն տարիների ընթացքում իր տեսած առաջին հրաշքն է: Մեկ այլ գյուղում մի տարեց կին ասաց, թե ինքը ևս իջել էր ջրափոս փորելու: Մեկ այլ գյուղացի տան մոտակայքում ջրի աղբյուր չունենալով, տարիներ շարունակ խանութից էր ջուր գնել: 78 տարեկան մի գյուղացի պարզապես ասաց. «Ջուրը և սնունդը կյանք են»: Շիրակի մարզի Հարիճ գյուղում ապրող Սաթենիկն ամուսնու, երկու որդիների և նրանց ընտանիքների հետ միասին գիտեն, որ նոր ջրի աղբյուրը մեծ փոփոխություն կբերի իրենց կյանք: Նախկինում նա երբեք համոզված չէր, թե արդյոք կկարողանա ջուր վերցնել, իսկ վերցնելու դեպքում էլ երբեմն ջրի ճնշումն այնքան ցածր էր լինում, որ նրա դույլերը կաթիլ-կաթիլ էին լցվում: Այժմ շատ ավելի հեշտ կլինի մանկահասակ իր երեք թոռներին մաքուր պահել, հատկապես, երբ նրանք խաղում են դրսում:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՐՈՒՄԻՑ

Գյուղացիները արտահայտեցին իրենց սրտառուչ երախտագիտությունը Երեց Սթոունին՝ Եկեղեցու մարդասիրական ծառայության միսիոներին իրենց խմելու մաքուր ջրի աղբյուրի համար:

Եկեղեցու մարդասիրական գործունեության հիմնական նպատակը միշտ եղել է հետևյալը՝ օգնել մարդկանց, որ իրենք իրենց օգնեն: Գյուղացիները ստանում են որակյալ ջրի աղբյուր, միևնույն ժամանակ զարգացնելով հմտություններ, որոնք ինքնավստահություն են ներշնչում: Բարձրակարգ մարդասիրական աշխատանքը շարունակում է առաջ ընթանալ Հայաստանում:

Մեկ այլ ծրագիր իրագործվեց Արարատի մարզում, որտեղ սպորտային համալիրը՝ ի շնորհիվ ջեռուցման նոր համակարգի, այժմ մատչելի է մարզում ցանկացած անձի օգտագործման համար՝ անվճար և կլոր տարի: Բացի այդ, գործում է սպորտային դպրոց 7-16 տարեկան երեխաների համար՝ տարբեր սպորտաձևերի ուսուցմամբ: Ցուցակագրումը միջինում հասնում է տարեկան 280 երեխայի: Ներկայումս գործում են ֆուտբոլի, թեթև աթլետիկայի, դաշտի հոքեյի, ձյուդոյի և սամբոյի խմբակներ: Դասարաններում աշակերտների միջին թիվը 15-ից 18 է:

ՎՕՍ Բարեգործությունները տեղեկացավ համալիրի կարիքների մասին Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու տեղական ճյուղի նախագահից: Հայաստանում ՎՕՍԲ-ի տնօրեններ՝ Ռոդ և Ջան Սթոուններին

հայտնեցին, որ սպորտային համալիրը և դպրոցը նոր ջեռուցման համակարգի կարիք ունեն հանդերձարաններում և վարչական սենյակներում, քանի որ հին համակարգը չէր աշխատում: Արդյունքում, աշնան և ձմռան ամիսներին հանդերձարանում ցուրտ էր լինում: Անցած ձմռանը մեծ թվով երեխաներ ցրտի հետևանքով հիվանդացել էին:

Տնօրեններ Ռոդ և Ջան Սթոունները նշեցին. «Մեր այցի ժամանակ մենք մեծապես տպավորվեցինք համալիրով: Հիանալի էր տեսնել վազորդներին, որոնք ստանում էին այն մարզումները, որոնց կարիքն ունեն բոլոր երեխաները, ինչպես նաև՝ մեծերը: Մենք գիտենք, որ այստեղ առաջարկվող ծառայություններից օգտվող մարդիկ ձևավորում են ավելի առողջ ապրելակերպ, որը կծառայի նրանց գալիք տարիների ընթացքում: Մենք նաև զգացինք, որ կարևոր է օգտվել այս ծրագրերից ձմռան ամիսներին, և ուրախացանք՝ իմանալով, որ Վերջին Օրերի Սրբերի Բարեգործությունների ֆինանսավորման շնորհիվ այս ծրագիրը հնարավոր է իրագործել»:

2012 թ. սեպտեմբերի 25-ին Արտաշատի սպորտային համալիրի տնօրեն Հենրիկ Սիմոնյանը հայտարարեց ջեռուցման ծրագրի իրականացման աշխատանքների ավարտի մասին, հայտնելով իր խորին շնորհակալությունը Վերջին Օրերի Սրբերի Բարեգործություններ կազմակերպությանը՝ ծրագիրը ֆինանսավորելու համար: ■

ՍՄՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՑԵԼԱԾ ՄԻՄԻՆ ՇԱՐՈՒՄԻՆՈՎ

Ամառվա շոգին ջրագծեր փորելը տանջալից աշխատանք է, բայց այս մարդիկ գիտեն, որ հանուն արդյունքների արժե դա անել:

ՍՄՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՑԵԼԱԾ ՄԻՄԻՆ ՇԱՐՈՒՄԻՆՈՎ

Նոր աղբյուրների շնորհիվ կա մեկից ավելի միջոց ջուր խմելու, երբ ծարավ եք:

Անմոռանալի ուղևորություն դեպի տաճար

Մարգարիտա Այվազյան, Երևան ճյուղ

ՍՄՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՑԵԼԱԾ ՄԻՄԻՆ ՇԱՐՈՒՄԻՆՈՎ

Տաճար այցելած խմբի մի քանի երջանիկ մասնակիցներ:

2012 թ.հուլիսի 29-ի վաղ առավոտյան կիրակի օրը Հայաստանի Երևան Միսիայի Երիտասարդ Տղամարդկանց և Երիտասարդ Կանանց ավելի քան 35 չափահասներ ավտոբուս նստեցին՝ ուղևորվելու երկուսուկես օրվա ճանապարհորդության դեպի Ուկրաինայի Կիևի Տաճարը: Առաջին անգամ էր, որ այդպիսի խումբ կազմակերպվեց: Երիտասարդ Կանայք և Երիտասարդ Տղամարդիկ մեկ շաբաթ մնացին Կիևում և կատարեցին բոլոր մկրտությունները՝ հնարավոր դարձնելով մեծահասակ հայ անդամների համար իրականացնել իրենց նախնիների տաճարային աշխատանքների մեծ մասը: Դա հրաշալի հնարավորություն էր երիտասարդ անդամների համար՝ զորացնելու իրենց վկայությունները և սովորելու ծառայել Տիրոջը: Լուսինե Գալստյանը Վանաձոր ճյուղից կիսվեց Կիևի Տաճարի ուղևորության մասին իր վկայությամբ. «Ես նույնիսկ պատկերացում չէի կարող ունենալ, որ կարող եմ 13 տարեկան հասակում լինել տաճարում: Բայց մի գեղեցիկ օր պարզվեց, որ կարող եմ գնալ տաճար: Տաճար մտնելիս ամբողջ մարմինս դողում էր հուզմունքից, բայց երբ ներս մտա հանգստություն զգացի հոգուս մեջ: Մթնոլորտն այնքան հաճելի էր, որ նույնիսկ չկարողացա հասկանալ, թե ինչպես անցավ այդ մեկ շաբաթը: Մկրտվելիս, ոտքս ջուրը դնելով, այնպիսի զգացում ունեցա, որ, թվում էր, թե ճախրում եմ երկնքում: Կյանքումս մի բաց

տեղ կար, որ ոչ մի բան չէր կարող լրացնել այն, տաճարը լրացրեց այդ բացը: Ես գտա մի գանձ, որը չէր կարող տալ ոչ ոք, նույնիսկ, ամենահարուստ մարդը: Հիմա ես գիտեմ, որ կյանքն իմաստ ունի, գիտեմ, որ կյանքը պայքար է բարու և չարի միջև, որ պայքարում ենք հավերժական կյանքին հասնելու համար: Տաճար այցելելուց հետո շատ երիտասարդներ ասում էին, որ չկա ավելի մեծ ուրախություն այս աշխարհում, քան տաճարում ծառայելը նրանց համար, որոնք հեռացել են այս կյանքից և սպասում են մեզ կատարելու տաճարային արարողություններ: Մեծ օրհնություն է լինել Նրա աշխատանքի մասնակիցը այս ժամանակաշրջանում՝ օգնելով կառուցել Աստծո Թագավորությունը երկրի վրա»:

Չկա ավելի մեծ ուրախություն այս աշխարհում, քան տաճարային ծառայությունը նրանց համար, ովքեր հեռացել են այս կյանքից և սպասում են, որ մենք կատարենք տաճարային արարողությունները: Մեծ օրհնություն է այս տնտեսությունում Նրա աշխատանքի մասը լինելը, օգնելով կառուցել Աստծո թագավորությունը երկրի վրա: ■

Այցելություն մանկատուն

Մարգարիտա Այվազյան, Երևան ճյուղ

Շաբաթներ շարունակ պլանավորելուց և նախապատրաստվելուց հետո, դեկտեմբերի 19-ին տարբեր ճյուղերից Երիտասարդ կանայք և երիտասարդ չափահասները գնացին Խարբերդի մասնագիտացված մանկատուն՝ այցելելու հաշմանդամ երեխաներին: Նրանք ժամանակ անցկացրեցին, խաղալով երեխաների հետ, նկարելով, զրուցելով նրանց հետ, ապա նրանց դուրս տարան և ձնե մարդ սարքեցին նրանց համար: Աջափնյակ ճյուղից Նարեկ Կարապետյանը կիսվեց իր տպավորություններով. «Մենք այսօր այցելեցինք հիվանդ երեխաներին, որոնք կարիք ունեն ուշադրության և աջակցության: Շատ հիանալի երեխաներ են, նրանց տեսնելիս մի պահ հուզվեցի և շփվելով նրանց հետ ավելի մտերմացա և հասկացա, որ Աստված տվել է մեզ հնարավորություն, Նա տվել է մեզ ամեն ինչ: Մենք պետք է շնորհակալ լինենք Նրան այս հնարավորության համար: Ես վստահ եմ, որ Աստված կա և միշտ օգնում է նրանց: Ես վկայում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է և միշտ օգնում է կարիքավորներին մեր ձեռքերի միջոցով»:

Ցականյան Աստղիկը՝ Չարենցավանի երիտասարդ կանանց խմբից, ասաց. «Ես գիտեմ, որ շատ կարևոր և բարի գործ կատարեցինք: Մեր այնտեղ գնալու նպատակը երեխաներին ուրախացնելն էր ու աջակցելը, որպեսզի նրանք երջանիկ լինեն: Ես մի պահ պատկերացրեցի, որ նրանք իրոք ունեին այդ ջերմության կարիքը: Ժամանակ անցկացնելով երեխաների հետ, ես զգացի, որ նրանք շատ հավանել էին ինձ և շատ ուրախ էին: Ամենակարևորը, որ Աստված

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Այցելություն մանկատուն

հոգ է տանում նրանց համար և նրանք ապահով ձեռքերում են»: Տերը միշտ օգնում է մեզ ուղի գտնել ծառայելու ուրիշներին: Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու իսկական անդամներ մենք պետք է հետևենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրինակին՝ օգնելով աղքատներին և կարիքավորներին, մենք պետք է վեր կենանք և շողանք: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Այցելություն մանկատուն

Ավետարանի սկզբունքներին հավատարիմ

Վիոլետա Թորոսյան, Երևան ճյուղ

Մարտի 18-ն էր և այդ օրը շատ առանձնահատուկ էր ինձ համար, որովհետև սա իմ վերածննդի նշանակված օրն էր: Առավոտյան երեցները եկան մեր տուն, որպեսզի ինձ և աղջկաս՝ Քրիստինային և նրա ընկերուհուն տաքսիով տանեին Արաբկիր ժողովատուն, որ ես մկրտվեի: Այս հատուկ ուշադրությունը ինձ հուզեց, որովհետև ես արդեն մեկ շաբաթից ավելի բուժումներ էի ստանում՝ առողջական խնդիր ունենալով, այդ պատճառով էլ փոխել էի մարտի 13-ի նշանակած իմ մկրտության օրը, որը նաև իմ ծննդյան օրն էր: Միսիոներների հանդեպ այնպիսի մայրական սեր էի զգում այդ ողջ ընթացքում, որ երբ գալիս էին, ուզում էի ինչ որ բանով նրանց հյուրասիրել, փայփայել որպես իմ զավակների, որ նրանք, թողնելով իրենց ապահով, հարմարավետ տները, իրենց ուսումը, եկել էին Հայաստան քարոզելու Քրիստոսի ավետարանը: Մենք բոլորս դուրս եկանք տնից և մինչ ես կփակեի դուռը ու հասնեի նրանց ետևից, նկատեցի մի մարդու, որը մոտենալով միսիոներներին նախ թքեց նրանցից մեկի երեսին, ապա ապտակելով դեմքին կատաղած գոռաց. «Ես աթեիստ եմ, ես ատում եմ ձեզ: Գնացեք այստեղից»: Մարդը խոսում էր շատ վատ հայերեն և ամենայն հավանականությամբ այլազգի էր: Ակնթարթային արագությամբ Քրիստինան՝ դուստրս, որը ողջ ժամանակ, երբ ես անցնում էի զրույցները միսոներների հետ, բարյացակամ, բայց զգուշավոր կեցվածք էր պահպանում և զրույցները ականջի ծայրով էր լսում, առաջ նետվեց դեպի այդ մարդը և նրան հեռու հրելով միսիոներներից, հարվածեց այդ մարդուն, պաշտպան կանգնելով Երեց Լարսենին, որը, դեռ այտը ապտակից կարմրած, բայց հեզությամբ ժպտալով, կանգնած էր, կարծես, չհասկանալով, թե ինչ կատարվեց, այնքան արագ ամեն ինչ տեղի ունեցավ: Մենք ուղղակի

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԵՐԵՑ ՊԵՏԵՐՍՈՆԻ ԿՈՂՄԻՑ

Վիոլետայի կյանքը փոխվել է հավատքի շնորհիվ:

շշմած կատարվածից, սկսեցինք հարցնել Երեց Լարսենին, թե ինչպե՞ս էր, իսկ նա շարունակելով հեզ ու խոնարհ ժպտալ, պատասխանեց. «Ամեն ինչ կարգին է, մենք շատ լավ ենք, եկեք գնանք»: Ուղղակի զարմացած էինք այդ երիտասարդների ինքնատիրապետման վրա, նրանցից ոչ մեկը հարվածով չպատասխանեց հարվածողին, նրանց հեզությունն ու խոնարհությունը ապշեցուցիչ էր: Նույնիսկ նրանց դեմքի արտահայտությունը չփոխվեց, ինչպիսի սիրալիրությամբ ժպտալով, հանգիստ ու մեղմ խոսում էին, այնպես էլ դիմացան չարի այդ փորձությանը Քրիստոսանման կեցվածքով, տառացիորեն կատարելով Հիսուսի պատվիրանը. «Չարին հակառակ մի կենաք, այլ ով որ ապտակ տա քո աջ երեսին, մյուսը նորան դարձրու»: Քրիստինան՝ դուստրս ցնցված էր և դեռ հուզված, երբ ես հարցրեցի, թե ինչպես եղավ, որ հարձակվեց այդ մարդու վրա. «Ուղղակի չկարողացա տեսնել այդ անմեղ տղայի վրա ինչպես թքեց և ապտակեց: Ես չհասկացա, թե ինձ հետ ինչ կատարվեց, կարծես, իմ տղային էին ծեծում: Իսկ նա նույնիսկ ինքնապաշտպանության չդիմեց: Ես երբեք չէի կարող սպասել, որ ես այդպես կարձագանքեի և նույնիսկ մտքովս չանցավ, որ նա կարող էր ինձ էլ հարվածել: Բայց նա այնպես շշմեց իմ միջամտությունից, որ չհամարձակվեց ինձ պատասխան հարված հասցնել: Նույնիսկ չհասցրեցի որևէ բան մտածել, միայն հիմա եմ ուզում հասկանալ, թե ինչու այդպես վարվեցի»: Շատ բուռն և փորձությամբ սկսված օրը հիանալի ավարտ ունեցավ: Տեղ հասնելուն պես, մենք տեսանք այնտեղ հավաքված շատ մարդկանց, որոնց մենք սկսել ենք այնպես սիրել, կարծես, մեր ընտանիքը լինեն: Պարուրված սիրո և ջերմության մթնոլորտով այնքան երջանիկ և ուրախ էի, որ մկրտվեցի վերջապես և ինձ վրա վերցրեցի Քրիստոսի անունը: ■

Ավետարանի օրհնությունները

Վիրաբ Մինասյան, Արտաշատ ճյուղ

Մինչև պատկառելի տարիքս ես ապրել եմ անաստված երկրում, որտեղ Աստծուն պաշտելը, եկեղեցի գնալն արգելվում էր: Այդ տարիներին քանդվեցին բազմաթիվ եկեղեցիներ և պահեստ դարձվեցին: Ես ոչինչ չգիտեի Ավետարանի, Աստծո օրենքների մասին: Բայց բնազդական մի հավատք միշտ եղել է իմ ընտանիքի անդամների և կնոջս մեջ: Մայրս բոլոր առիթներով զնում էր մի փոքրիկ մատուռ, որը սրբավայր էր, և մոմ էր վառում, իսկ ես մինչև այս Եկեղեցուն միանալը, երբ ալկոհոլային խմիչքներից կախվածություն էի ձեռք բերել, միշտ ասում էի. «Աստված տա, սա վերջին բաժակը լինի»:

Ավետարանի մասին ես իմացա միսիոներներից: Մենք հանդիպեցինք «Խոր Վիրապ» վանքում 1992 թվականի ապրիլի 6-ին Զատիկին: Նրանք հայերեն չէին խոսում և նրանց օգնության եկավ իմ դուստրը՝ Հասվիրա Մինասարյանը: Հասվիրան թարգմանում էր նրանց հարցերը և մեր պատասխանները և վերջում նրանք տվեցին իրենց

հասցեն և մենք փոխանակեցինք մեր հեռախոսահամարները՝ նորից հանդիպելու ակնկալիքով: Նրանք Երևանում զանգահարեցին Հասվիրային և հանդիպեցին նրա հետ, որից հետո աղջիկս էր հանդիպեց նրանց հետ իրենց բնակարանում:

Առաջինը մկրտվեց աղջիկս իր երեք դուստրերի՝ Գոհարի, Միլենայի, և Անիի հետ,1992թվականի սեպտեմբերի 5-ին, այնուհետև նրանք այցելեցին մեր տուն Եղբայր և Քույր Մորթոնների հետ և մեզ նվիրեցին Մորմոնի Գիրքը և Աստվածաշունչը, և մենք սկսեցինք անցնել զրույցները: Այդ ընթացքում ինձ մոտ սկսվել էր կոկորդի հետ կապված հիվանդություն՝ ձայնս նստում էր և ինձ դժվար էր լինում խոսել: Հետո սկսեց կոկորդս ցավել: Այդ նույն հիվանդության ախտանիշներով ես երկու մարդկանց դեպք գիտեի՝ մեկը գործընկերս էր, իսկ մյուսը մեր հարևանն էր, որոնց մոտ նույնպես ախտորոշել էին կոկորդի չարորակ ուռուցք, և ես ինձ համարում էի անհույս հիվանդ:

Սկզբում գործընկերս՝ Նորիկը գնաց վիրահատության և 10 օր անց մահացավ: Հետո այցելեցի հարևանիս՝ Վոլոդյային, որը սարսափելի վիճակում էր, և նա ինձ ասաց, որ պետք է գնար վիրահատության, թեև ավելի լավ էր մահանալ այդպես, քան անգիտակից տառապել: Վիրահատությունից հետո ես այցելեցի նրան, նա շատ վատ վիճակում էր: Նա ինձ խորհուրդ տվեց վիրահատության չգնալ, որովհետև վիրահատությունն արագացնում էր մահը: Վերադառնալով տուն, շատ հուսահատված էի և 20 օր հետո իմացա, որ Վոլոդյան էլ է մահացել:

Աղջիկս պատմում է, որ նա ամբողջ ժամանակ աղոթում էր ինձ համար, որ կոկորդիս հիվանդությունը չարորակ չլինի: Նա ասում էր՝ պետք է գնալ բժշկի և մասնագետ ուռուցքաբանը միայն հաստատ կարող է ասել՝ չարորակ է, թե՝ ոչ: Հույսս կտրելով աշխարհիկ

ՄԻՆԱՍՅԱՆՆԵՐԸ ՔՈՀԻՑ ԸՆՏԼԻԻ ԿՈՂՄԻՑ

Վիրաբ Մինասյանը և Հասմիկ Մինասյանը դարձան հավերժական ամուսիններ՝ 60 տարի ամուսնացած լինելուց հետո, Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի արարողությունների շնորհիվ:

բժշկությունից, ես ապավինեցի Աստծուն իմ կյանքն ու առողջությունը: Որոշում կայացրեցի կարդալ Մորմոնի Գիրքը և վերջացնելուց հետո գնալ վիրահատության:

Աշուն էր և ես ողջ ձմռան ընթացքում կարդում էի սուրբ գրքերը, բայց որքան կարդում էի, այնքան տխրում էի, որովհետև գիտեի, որ շատ մեղքեր էի գործել և խախտել էի գրեթե բոլոր պատվիրանները: Այդպես հուսահատ կարդում էի, երբ ուշադրությունս գրավեց ապաշխարությունը: Նորից կարդացի ու կարդացի, երբ հույսի մի շող անցավ մարմնովս: Ես հասկացա, որ ապաշխարելով, զղջալով, խոստովանելով մեղքերս և դրանք թողնելով և մկրտվելով, իմ մեղքերը կթողնեմ ջրի տակ և դուրս կգամ մաքրված և մեղքերիս ներում ստացած:

Աղջիկս երկու որդիներիս և փեսայիս՝ Սլավայի հետ ինձ տարան Երևան՝ ուռուցքաբանական ինստիտուտ: Երբ հանդիպեցինք բժշկին և նա նայեց կոկորդս, առաջին բանը, որ նա ասաց, այն էր, որ ես շատ բախտավոր մարդ էի: Ես հարցրեցի, թե ինչու էր ինձ բախտավոր համարում այդ հիվանդությամբ, նա պատասխանեց ասելով, որ 200 հիվանդներ կան հիվանդանոցում վիրահատված, բայց ամենաբախտավորը ես եմ, որովհետև ինձ մոտ գոյացություն է ձայնալարերի վրա, կհեռացնենք և ձայնը կբացվի: Նա հեռացրեց գոյացությունը և վիրահատության համար տաս դոլար վճարեցինք: Նրանք վերցրեցին հյուսվածքից զննման համար և ասացին, որ երկու օր հետո գայինք պատասխանն իմանալու: Այդ երկու օրը ինձ համար շատ երկար թվացին, բայց մտածում էի, ինչ էլ որ լինի, պիտի մկրտվեի: Զննման պատասխանը հերքեց չարորակ ուռուցքի առկայությունը:

Օ՜հ, որքան բախտավոր էի զգում ինձ, այնքան օրհնված և երջանիկ, իսկ մկրտության հնարավորությունը, կարծես, մի լուսավոր նոր կյանքի հնարավորության բացված դուռ լիներ ինձ համար: Այդ վկայությունն էր, որ ինձ տարավ դեպի մկրտություն:

Դասերը վերջացնելուց հետո, նշանակվեց մկրտության օրը և ես ու կինս Երևան Հանթսմանի գործարանում շարժական ավազանի մեջ մկրտվեցինք Արայիկ Մինասյանի՝ որդուս կողմից, որը հետագայում կանչվեց տարածքային Յոթանասունի քվորումի անդամ:

Արդեն տասնութ տարի է անցել և ես գիտեմ, որ ապաշխարությունն ինձ փրկեց այս հրաշալի Եկեղեցու միջոցով և ես կենդանի եմ Երկնային Հոր ողորմության և Հիսուս Քրիստոսի սուրբ Քավության շնորհիվ: Այժմ ես ութսունչորս տարեկան եմ: Ծառայել եմ ճյուղի նախագահ և այժմ երեցների քվորումի նախագահն եմ: Աստված սեր է և Հիսուսը իմ Փրկիչն է: Ես սկսել եմ զգալ քավող սիրո երգը և ես հասկացել եմ, որ սերը հավերժական ուրախություն է և երջանկություն մեր հոգիների համար: Մենք ունենք հարության և նոր կյանքի խոստումը: Եկեղեցին տվել է ինձ այս հույսը և ես գիտեմ, որ կյանք կա մահից հետո և մենք կունենանք ուրախություն՝ վարագույրից այն կողմում տեսնելով մեր սիրելիներին: ■

ARMENIAN